ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3617-Ա «03» սեպտեմբերի 2025թ.

ՄՈԼԴՈՎԱԿԱՆ ՓՈՂՈՑ Հ.39/37 ՇԵՆՔԻ Հ.Հ.10,11,12,13,14,15,16,17,18,19,20 ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել «ՋԱՍԹ ԴԻՎԵԼՈՓԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Տարոն Ավետիսյանի դիմումը՝ Մոլդովական փողոց հ.39/37 շենքի, սեփականության իրավունքով «ՋԱՍԹ ԴԻՎԵԼՈՓԵՐ» ՍՊԸ-ին պատկանող հ.հ.10,11,12,13,14,15,16,17,18,19,20 ավտոկայանատեղիների (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.31032025-01-0318, հ.31032025-01-0316, հ.31032025-01-0315, հ.31032025-01-0320, հ.31032025-01-0323, հ.31032025-01-0326, հ.31032025-01-0333, հ.31032025-01-0336, հ.31032025-01-0338, հ.31032025-01-0339, հ.31032025-01-0340 վկայականները) գործառական նշանակությունները հասարակական սահմանելու մասին:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի հ.88 որոշման հ.1 հավելվածի 7-րդ կետով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 2025 թվականի հուլիսի 23-ի հ.Դ-73825-25 եզրակացությունը.

1.Նոր Նորք վարչական շրջանի, Մոլդովական փողոց հ.39/37 շենքի, սեփականության իրավունքով «ՋԱՍԹ ԴԻՎԵԼՈՓԵՐ» ՍՊԸ-ին պատկանող հ.հ.10,11,12,13,14,15,16,17,18,19,20 ավտոկայանատեղիների գործառական նշանակությունները, առանց ճարտարապետահատակագծային առաջադրանքի և նախագծային փոփոխությունների, սահմանել որպես հասարակական և ընդգրկել ոչ բնակելի ֆոնդում՝ «ՀՀՇՆ 31-01-2014» պահանջներին չհակասելու պայմանով:

2. Հանձնարարել Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարին՝ սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքը հաշվառել որպես հասարակական:

3.Ընդունել ի գիտություն, որ սույն որոշմամբ սահմանված անշարժ գույքի գործառական նշանակության փոփոխությունը ենթակա է պետական գրանցման՝ ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում այն ստանալու հաջորդ օրը:

5.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով ՀՀ վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

6. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունների պետերի ու Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի վրա:

7. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ